

ուիս որպէս զփեճիկ խոցւածոց ոմն առիւ քարչեալ  
 հանցէ ի բաց յանձնէ. որ խռովեալս էի ի մէջ ծովա-  
 ծուփ կենցաղոյս՝ արդ այսօր նոր խռովեցոյց յամ-  
 բոխմանէ նոր իմն յեղակարծ փոթորկիս: Զի զաղաւ-  
 նին որ թողեր ի տան՝ այսօր խլեցաւ յորսողաց. նախ՝  
 զի դու թողեր զաշխարհ եւ ելեր ի տանէս, թէպէտ  
 անճահ է օրինակել զճառս բանի քոյդ նպատակու-  
 թեամբ, այլ այլարանութեամբ իմն յաչացս պակասե-  
 լոյ քոյդ տեսեան, նաեւ այսօր տատարակն սիրասուն,  
 զորոյ ճլվալն տեսեր, ամբարձին յարկացս. զարտուտն  
 ճռուողեալ քաղցրախօս՝ այսօր խլեցին ի բունոյս.  
 զձագուկն իմ սիրալի՝ այս[օր] արծիւն խոյացեալ յա-  
 փըշտակեաց ի բնակութենէս, զՅովսէփիկս ասեմ, զո-  
 րոյ դու տեսեր զպատշաճաւոր անդամսն, զձիւնա-  
 փայլ գէմքն ի գլխոյն յոտից մատանց, թո՛ղ սոքօք  
 զզայարանացն չափաւոր յօդուածք յօրինուածու-  
 թեան, թո՛ղ զզուարթալի կերպարան վայելչագունեղ  
 հասակաւն, որք սոքա արտաքնոցն են նշանք՝ ի-  
 մաստասիրել մեզ: Յիշեա՛ զի եօթն ամսոց յտն ե-  
 լեալ փութայր ի քայլս, եւ յիններորդին՝ ելման  
 եւ իջման սանդխոցն կառավարել արագիւր: Տեսեր  
 զնորա ներքին մարդոյն զազգու շնորհ, հարազատա-  
 բար սէրն հասարակաց եւ զհանդարտութիւն զգօնու-  
 թիւն խոհեմութեան. տեսեր զնորա նիստքն որպէս  
 զձերս, նա եւ համահաւասար ի գրուցատրութիւն եւ  
 ի պատասխանատուութիւն ընթրեաց ըստ ազնիւ բա-  
 րուցն. լուար զքաղցրարարբառ նորա պատշաճաւո-  
 րեալ ի տեսերս եւ ի թուղթս, յորժամ գտեալ առ-  
 նէր ի փափկարուն ձեռինն. տեսեր զձեռնարկութիւն  
 խաղուց ճեպմամբ եւ յուզմամբ եւ հայցուածովք  
 ի գրիչ եւ ի քարտէս զբօսնութիւն. լուար ի սաս-  
 դերօդ անցաւորաց վաճառականաց զանազան կե-  
 րակրոց ընդ ձայնել նոցուն՝ ինքն եւս առեալ զնո-